ԱՂՈԹՔՆԵՐ
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Renovabis

ԲԱՑԻ՛Ր ՍԻՐՏՍ

Լուսանկարը՝ Միխայել Կոմցի

Սիրելի աղոթակիցներ,

Սուրբ Հոգին է, Ով մեր մեջ ամեն տեսակ բարին է գործում *(հմմտ. Հռոմ. 8, 26)*: Իր ներկայությունը այժմ կարևոր է առավել, քան երբևէ: Իր շնորհներով ենք նորոգվում, իմաստանում, հավատքի մեջ ամրանում և բժշկվում: Նաև Սուրբ Հոգու շնորհներն են օգնում մեզ տարբերել այն, ինչ մեզ համար բարի է և կամ էլ ընդհակառակը՝ վնասակար: Սակայն Սուրբ Հոգին նաև սեր է, որն ուղղորդում և մղում է մեզ առ Աստված և մեր մերձավորները:

Այս աղոթագրքույկը նպատակ ունի ուղեկից դառնալու՝ Աստվածային Հոգու հետ մեր անհատական հանդիպման: Դրան է ծառայում նաև այս գրքույկի հարմարավետ չափը. մենք կարող ենք այն ամենուրեք մեզ հետ վերցնել: Միաժամանակ այն պետք է ծառայի միասնական աղոթքին: Ի վերջո, Սուրբ Հոգին միավորում է մարդկանց:

Սույն գրքույկով, որն արդեն հասանելի է տարբեր լեզուներով, մենք ցանկանում ենք աղոթքի մի կամուրջ կառուցել մեզ հետ համագործակցող Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի երկրներում ապրող մարդկանց միջև, որովհետև ուր Աստծո Հոգին ներկա է, այնտեղ միություն և փոխադարձ հասկացողություն է տիրում:

Թոմաս Շվարց, ածբն. գիտ. դոկտ., պրոֆ.
Ռենովաբիսի գլխավոր գործադիր տնօրեն

ՇՆՉԻ՛Ր ԻՄ ՄԵՋ

Շնչի՛ր իմ մեջ, ով Սու՛րբ Հոգի,
Որպեսզի սուրբ լինեն մտքերս:

Մղի՛ր ինձ, ով Սու՛րբ Հոգի,
Որպեսզի սուրբ լինեն գործերս:

Առինքնի՛ր ինձ, ով Սու՛րբ Հոգի,
Որպեսզի սիրեմ սրբությունը:

Զորացրու՛ ինձ, ով Սու՛րբ Հոգի,
Որպեսզի պահպանեմ սրբությունը:

Պաշտպանի՛ր ինձ, ով Սու՛րբ Հոգի,
Որպեսզի երբեք չկորցնեմ սրբությունը:

Վերագրվում է Ս. Օգոստինոս Երանելուն

ԱՐԻ՛, ՍՈ՛ՒՐԲ ՀՈԳԻ

Լցրու՛ ինձ ամբողջությամբ,
Տու՛ր ինձ ուժ,
Պարգևի՛ր ինձ քաջություն,
Նետի՛ր ինձ աստվածային հրի մեջ,
Թո՛ղ որ կյանքի ջուրը ցայտի,
Ոռոգի՛ր ինձ Քո Հոգով,

Վերցրու՛ իմ վախը,
Վերցրու՛ իմ պապանձումը,
Վերցրու՛ իմ վարանումը,
Վերցրու՛ իմ անվստահությունը,
Վերցրու՛ իմ միայնակությունը,

Վերցրու՛ ինձ

և տու՛ր ինձ

Անվերջ կարոտ:

© Անդրեա Շվարց

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

Արի՛, Սո՛ւրբ Հոգի,
Դու՝ հոգի ճշմարտության, որ ազատագրում է մեզ:
Դու՝ հոգի փոթորկի, որ հուզում է մեզ:
Դու՝ հոգի քաջության, որ զորացնում է մեզ:
Դու՝ հոգի հրո, որ վստահության արժանի է դարձնում մեզ:

Արի՛, Սո՛ւրբ Հոգի,
Դու՝ հոգի սիրո, որ միավորում է մեզ:
Դու՝ հոգի ուրախության, որ երջանկացնում է մեզ:
Դու՝ հոգի խաղաղության, որ հաշտեցնում է մեզ:
Դու՝ հոգի հուսո, որ բարիացնում է մեզ:

Արի՛, Սո՛ւրբ Հոգի:

Լեոնարդո Բոֆֆ

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Ո՜վ Սո՛ւրբ Հոգի,
Որ սերն ես Հոր և Որդու,
Հուշի՛ր ինձ միշտ՝ ինչ պիտի խորհեմ:
Հուշի՛ր ինձ միշտ՝ ինչ պիտի խոսեմ
և թե ինչպես պիտի խոսեմ:
Հուշի՛ր ինձ՝ ինչի մասին պիտի լռեմ
և թե ինչպես պիտի այդժամ գործեմ:
Հուշի՛ր ինձ՝ ինչ պիտի անեմ ի փառս Աստծո
և հոգիների բարօրության
Ու սեփական անձիս սրբացման համար:

Սու՛րբ Հոգի,
Տու՛ր ինձ իմաստություն՝ հասկանալու
և ճանաչելու:
Տու՛ր ինձ ըմբռնելու կարողություն՝
Ամեն բան մտապահելու:
Սովորեցրու՛ ինձ միջոց և տու՛ր ինձ

Ունակություն՝ նորից ու նորից ուսանելու:
Տու՛ր ինձ խորաթափանցություն՝
Ճիշտ մեկնաբանելու և զանազանելու:
Տու՛ր ինձ շնորհ՝
Ազդեցիկ խոսելու:

Սու՛րբ Հոգի,
Տու՛ր ինձ վստահություն և
Շեշտակիություն ճանապարհիս սկզբում,
Ուղեկցի՛ր ու առաջնորդի՛ր ինձ իրագործելիս,
և շնորհի՛ր ինձ կատարելություն
Ավարտելիս:
ԱՄԵՆ

Այս աղոթքը Հովհաննես Պողոս Բ Պապն ընթերցել է ամեն օր

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Դու, որ ազատագրող շունչն ես կենաց,
Ոռոգի՛ր առօրյաս ցողովդ զովության,
Որպեսզի այն ամենը,
Ինչ միակերպ ու ծանձրալի է իմ մեջ,
Բաբախի կրկին՝
Զմայլվելու և նվիրաբերվելու
Քո զարկերակում եռանդուն:

Սո՛ւրբ Հոգի,
Դու, որ պատվասիրությանս խնամողն ես,
Պարգևի՛ր խիզախություն՝
Մերժման, կորստի կամ քննադատության ահից
Ինքս ինձ չդավաճանելու:
Պահպանի՛ր ինձ համար
Ազատագրող ճշմարտությունն առ այն,
Թե ով եմ ես իրապես Աստծո աչքում
ամենատես:

Սո՛ւրբ Հոգի,
Դու, որ անբիծ աղբյուրն ես նորոգման,
Լցրո՛ւ վրաս ջուրդ բժշկարար,
և թող ներկայությամբդ փարատվի
Միայնակության ու տարակուսանքի ամեն
հատված:

Սո՛ւրբ Հոգի,
Վերափոխի՛ր կյանքի լիությունը իմ մեջ:

Քույր Թեոդորա Շուլակ, Սուրբ Փրկչի առաքելության քույրերի միաբանություն

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Սու՛րբ Հոգի,
Դու՝ հոգի Ճշմարտության, լուսավորի՛ր ինձ,
Որ կյանքում էականը զանազանեմ:

Դու՝ հոգի զորության, արա՛ այնպես,
Որ ոտքերիս տակ ամուր հող ունենամ:

Դու՝ հոգի ազատության, ծերբազատի՛ր ինձ,
Որ սովորեմ ծառայել
Խաղաղությանն ու արդարությանն ամենքի:

Դու՝ հոգի խորհրդի, հրապուրի՛ր ինձ,
Որ համարձակվեմ ճամփորդել Աստծո հետ:

Դու՝ հոգի գիտության, ուղղորդի՛ր մտքերս,
Որ արարչությունդ և արարածներդ սրտացավ
մեծարեմ:

Դու՝ հոգի աղոթքի, աղոթի՛ր ներսումս,
Որ Աստված կարողանա իմ մեջ խոսել:

Դու՝ Աստծո հոգի սիրո, պահպանի՛ր ինձ,
Որ ընդմիշտ հուսո մեջ և հույսով ապրեմ:

Ես կամենում եմ ճանապարհ ընկնել նոր
ավյունով
և նվիրվել գալստյանը նոր աշխարհիդ:

Լուիս Գուրնդին

Ո՞Վ ՀՈԳԻ ԱՍՏԾՈ, ՈՐ ՆԵՐՍՈՒՄՍ ԵՍ

Սովորեցրու՛ ինձ ավելի շատ սիրել Քեզ,
Որ կարողանամ հետևել իմ Տիրոջն ու Աստծուն,
Հիսուս Քրիստոսին և առօրյայում
Նրա հետքերով շարժվեմ:
Սովորեցրու՛ ինձ՝ հավատքում ավելի խոր աճել
և դառնալ այն,
Ինչ Դու սկզբից ի վեր բոլորիս համար կամեցել ես:

Սո՛ւրբ Հոգի, ապրի՛ր իմ մեջ:
Ամեն

Քույր Նադյա Ռուժինա, Ս. Բենեդիկտի միաբանություն

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Սու՛րբ Հոգի, տու՛ր ինձ այն հավատքը,
Որն ինձ փրկում է տարակուսանքից ու մեղքից:
Տու՛ր ինձ այն սերը՝ Աստծո և մարդկանց
հանդեպ,
Որն ինձ մաքրում է ատելությունից ու
դառնությունից,
Տու՛ր ինձ այն հույսը, որն ինձ ազատագրում է
Վախից և հուսահատությունից:

Դիտրիխ Բոնհոֆեր

ԱՐԻ՛, ՍՈՒ՜ՐԲ ՀՈԳԻ:
ՄԵՆՔ ՔՈ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆՔ

Արի՛, Սու՜րբ Հոգի: Մենք Քո կարիքն ունենք:
Մյուսները սպասում են մեր խոսքին,
Իսկ մենք երկչոտ ենք:
Մեր բերանով մի խոսք ասա՛,
Որը նրանց ճանապարհ ցույց կտա:

Արի՛, Սու՜րբ Հոգի: Մենք Քո կարիքն ունենք:
Ինքներս հոգնած ենք և սողոսկում ենք այնտեղ,
Ուր մեր հանգիստը պետք է գտնենք:
Տու՛ր մեզ ուժ՝ դեպի մյուսները դառնալու,
և թո՛ղ որ դա օգնի նրանց:

Արի՛, Սու՜րբ Հոգի: Մենք Քո կարիքն ունենք:
Ինքներս մեզ չափազանց կարևորություն
ենք տալիս:
Սակայն երբ Դու ես հպվում մեզ, ապա զգում
ենք այն,
Ինչ երկնավոր Հայրն է ասում.
«Դու կարևոր ես Ինձ համար»:

Արի՛, Սու՜րբ Հոգի: Մենք Քո կարիքն ունենք:
Մենք շտապում ենք, քանզի դեռ այնքան
անելիք կա:
Սակայն Քո կողքին կարող ենք մի պահ
շունչ առնել,
Աստծո սերը ներշնչել
և մեր թշվառությունն արտաշնչել:

Արի՛, Սու՜րբ Հոգի: Մենք Քո կարիքն ունենք:
Երբ դիպչում ես Դու մեզ,
Մյուսների դեմքին նշմարում ենք այն լույսը,
Որն Աստծուց է գալիս:

Թիլմանն Բելլեր

ՀՈԳԻ ԿԵՆԱՑ

Հոգի՜ կենաց, բացի՛ր սիրտս
Պարգևներիդ և շնորհներիդ համար:

Հոգի՜ ճշմարտության, թո՛ղ որ կարծիքների այս
խառնաշփոթում
Աստծո ճշմարտությունը ճանաչեմ:

Հոգի՜ սիրո, փոխակերպի՛ր ինձ,
Որպեսզի կարենամ իրապես սիրել:

Հոգի՜ խաղաղության, օգնի՛ր ինձ՝
Խաղաղություն և հաշտեցում սերմանել:

Հոգի՜ ուրախության, շնորհի՛ր ինձ գոհություն՝
Կյանքում եղած ամեն բարու և գեղեցկության համար:

ԿԵՆԴԱՆԱՑՆՈՂ ՀՈԳԻ

Սո՛ւրբ Հոգի,
Դու՝ կենդանացնող կյանք,
Տիեզերքի զորութենական ուժ և արմատ արարչության,
Մաքրի՛ր արարչությունդ աղտոտվածությունից,
Ձնջի՛ր մեղքն ու դարմանի՛ր վերքերը:

Ո՜վ, փայլատակող կյա՛նք, որ միայն
փառաբանության ես արժանի,
Սթափեցրու՛ և վերստին արթնացրու՛ տիեզերքը:

Հիլդեգարդ ֆոն Բինգեն

ՈՎ ՍՈՒՐԲ ՀՈՒՐ

Ո՜վ սո՛ւրբ հուր,
Այրվի՛ր մեր սրտերում:
Ո՜վ սո՛ւրբ ջուր,
Հոսի՛ր մեր հարաբերություններում:
Ո՜վ Սո՛ւրբ Հոգի,
Թևավորի՛ր մեր մտքերը:
Ո՜վ սո՛ւրբ կողմնակից,
Խոսի՛ր մեր ներսում:
Ո՜վ սո՛ւրբ աղավնի,
Թռչի՛ր մեր աշխարհով մեկ:
Ո՜վ սո՛ւրբ սեր,
Ոգեշնչի՛ր մեզ ամենքիս:

Անտոն Ռոտցետեր

ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉ

Աստծո՛ շունչ, Սո՛ւրբ Հոգի,
Որի մեջ շնչում, որի միջից շնչում, որի միջոցով շնչում եմ:
Շարժի՛ր և արթնացրու՛ ինձ:
Պատրաստի՛ր ինձ՝ ամենից աղքատներին օգնելու համար:
Խրախուսի՛ր ինձ՝ երկխոսությանը ծառայելու համար,
Զորացրու՛ ինձ՝ ճշմարտությունը վկայելու համար:

Աստվածայի՛ն Հոգու ուժ, որը խոստացվել է Որդուց և ուղարկվել Հորից,
Պահպանի՛ր ինձ մեծամտությունից և գոռոզությունից:
Ուղեկցի՛ր ինձ ամենօրյա հանդիպումներիս ընթացքում:
Պարգևի՛ր ինձ մարդկանց մեջ շնորհների բազմազանության
Բացահայտելու ունակություն:
Պահպանի՛ր ինձ անարդար և անտեղի թշնամությունից:
Ծածկի՛ր ու պաշտպանի՛ր ինձ բոլոր վեճերում և բախումներում:

Սո՛ւրբ Հոգի, որ նեցուկն ես եկեղեցուդ,
Պահպանի՛ր այն և ուղեկցի՛ր իր ճանապարհին ժամանակի միջով:
Թո՛ղ եկեղեցին որևէ մեկին չկորցնի այդ ընթացքում:
Թո՛ղ նաև մենք մշտապես եկեղեցուդ հետ դեպի Քեզ տանող ճանապարհին մնանք:

Աստվածայի՛ն Մխիթարիչ:
Մենք չգիտենք,
Թե ապագան ինչպիսին է լինելու,
Մենք չգիտենք, թե ինչպիսի
Մարտահրավերների առջև ենք կանգնելու:
Մենք չգիտենք, թե դրանց ժամանակ ուժեղ կամ թույլ ենք գտնվելու:
Սակայն Դու մխիթարում ես մեզ ներկայությանդ խոստումով:

Դու զորացնում ես մեզ շնորհներովդ:
Դու պաշտպանում ես մեզ սիրո ուժովդ:
Եղի՛ր մեզ հետ Աստծո արքայության կառուցման ընթացքում,
Ուր մենք Քո միջոցով կարող ենք երկրպագել ու փառաբանել Հորը և Որդուն
Ամեն օր և հավիտյանս հավիտենից:
Ամեն

Թոմաս Շվարց

Հրատարակող՝ **Renovabis**,
գերմանական կաթոլիկների սոլիդարության նախաձեռնություն՝ Կետրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մարդկանց հետ
Հասցե՝ Domberg 38/40, 85354 Freising, Germany
www.renovabis.de - © Renovabis
5-րդ ընդլայնված հրատարակություն, փետրվար 2025 թ.
Խմբագիր՝ Թոմաս Մ.Պ.Շուման
Գծապատկերումը՝ ReclameBüro, Մյունխեն

Շապիկի նկարը՝ Աննա Մակաչ, Լվով
Թարգմանությունը գերմաներենից՝ Հարություն Գ. Հարությունյան, Երևան
Հայերենի սղագրումը՝ Անահիտ Սարգսյան, Երևան

Carbon neutral
Print product
ClimatePartner.com/12518-1907-1001

«Հոգիդ ուղարկում ես՝
ստեղծվում են. Եւ դու նորոգում
ես երկրի երեսը:»

Սաղմ.104, 30

Renovabis
Եվրոպայի արևելքում գտնվող
մարդկանց կարեկից

www.renovabis.de